




ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ

ՀԻՊՊՈԼԻՏ ՀՌՈՄԵԱՑԻ ԿԱՄ ԲՈՍՏՐԱՑԻ (+235)

Հիպպոլիտը Հռոմի Եկեղեցու «առաքելական ամենանշանավոր հայրերից մեկն է»¹: Նա միաժամանակ համարվում է «հոգեկիր, ամենաքեղմնավոր մի հեղինակ Գ դարու»²:

Հիպպոլիտի կենսագրության մասին շատ բան հայտնի չէ մեզ: Եվսեբիոս Կեսարացին (263—340) իր «Պատմություն Եկեղեցույ» աշխատության մեջ³ խոսում է ընդհանրապես նրա մատենագրական հարուստ վաստակի քան թե նրա կենսագրության մասին:

Երբ 212 թվականին, Որիգենեսը (185—254) այցելում է Հռոմի քրիստոնեական համայնքը, նա մայրաքաղաքի եկեղեցիներից մեկում լսում է հոգեկիր մի քարոզ՝ «Ներբող Տեառն մերոյ և Փրկչին» թեմայի շուրջ: Քարոզիչը Հիպպոլիտ երեցն էր, որը քիչ հետո իր բարեկամների կողմից ընտրվում է առաջին հակա-պապը Հռոմի Եկեղեցու:

Որիգենեսը⁴ և Հիպպոլիտը այդ թվակա-

նից սկսած սերտ բարեկամներ և գործակիցներ են դառնում: Հիպպոլիտը միշտ հիացմունք է տածել դեպի Որիգենեսի անձն ու գործունեությունը:

235 թվականին Հիպպոլիտը նահատակվում է Սարդիսիայում՝ «մահվան կղզում»: Հռոմի Եկեղեցին նրա նահատակության օրից Հիպպոլիտի հիշատակը մեծարում է որպես նահատակ մարտիրոսի և նրա տոնը կատարում է ամեն տարի օգոստոսի 22-ին:

Հիպպոլիտը ծնունդով արևելքի է համարվում և ոչ բնիկ հռոմեացի կամ ծագումով լատին⁵: Արևելյան իր ծագումի պատճառով նա Եկեղեցու պատմության մեջ կոչվել է Բոստրացի, սակայն, «լավ չի պարզվել դեռ, թե ինչո՞ւ նա «Բոստրացի» է ասվում շատ տեղ»⁶, ինչպես նաև մեր մի շարք ձեռագրերում:

Հիպպոլիտը որպես արևելքի ծնունդ ստացել է հելլենիստական կրթություն:

Հույն անտիկ փիլիսոփայության և գրականության մասին նա ունեցել է խորը և բազմակողմանի հմտություն, հունական մշակույթի, փիլիսոփայության սկզբնավորության առաջին օրերից սկսած: Նա միաժամանակ քաջաճանոթ է եղել հունական հին, հեթանոսական «խորհուրդներ»-ին՝ միստերիաներին, և պաշտամունքներին: Մյուս կողմից, նրա աստվածաբանությունն

¹ Կարապետ վարդապետ (Տեր-Մկրտչյան), «Արարատ», հատոր երկրորդ, 1896, էջ 58:

² Կնիք հաւատոյ, ընդհանուր Սուրբ Եկեղեցույ, յուղափառ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դաւանութեանց, հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի (Տեր Մկրտչյան), Ս. Էջմիածին, 1914 էջ XXXVI:

³ Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն Եկեղեցույ, 1878, Վենետիկ, Զ դպրութիւն:

⁴ Տես նրա կենսագրության և մատենագրական վաստակի մասին «Էջմիածին» ամսագիր, 1981, հունվար, էջ 26—30, փետրվար, էջ 17—21:

⁵ Johannes Quasten, patology, T. II, էջ 163:

⁶ Կնիք հաւատոյ..., նույնը, էջ XXXVI:

ու մեկնողական-մատենագրական վաստակը սերտորեն կապված են եղել հույն մեծ ու հմուտ աստվածաբանների Լոգոսի՝ Բանի⁷ վարդապետության և Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցի ավանդությունների հետ: «Հիպպոլիտը հույն էր իր արտահայտությունների, ինչպես նաև իր մտածողության մեջ և Հռոմի վերջին քրիստոնյա հեղինակն էր որ ստեղծագործել է հունարեն լեզվով»⁸:

Հռոմեական կայսրության մեջ, հաղորդակցության պաշտոնական լեզուն հունարենն էր, բացի Հյուսիսային Աֆրիկայից, ուր գործածվում էր լատիներենը: Աֆրիկայի քրիստոնեական համայնքը Աստվածաշունչը իր լեզվով հասկանալու համար նրա լատիներեն թարգմանության անհրաժեշտություն է զգացել: Այդ կարիքը գոհացնելու համար Բ դարից սկսած կատարվում են Աստվածաշունչի լատիներեն մասնակի թարգմանություններ: Հին Կտակարանը լատիներենի է թարգմանվում հունարեն «Եօթանասնից» կոչված օրինակի վրայից, իսկ Նոր Կտակարանը՝ հունարեն բնագրից:

Հերոնիմոսը, Հռոմի Եկեղեցու թարգմանիչ մեծ հայրը (340—420) 20 տարի ժամանակ հատկացնելով Աստվածաշունչի լատիներեն հին թարգմանության վրա, այն սրբագրում և վերախմբագրում է:

Հերոնիմոսի այդ աշխատանքը Աստվածաշունչի թարգմանությունների մեջ հայտնի է Վուլկաթա անունով: Հերոնիմոսը Հին Կտակարանի վերասրբագրությունը կատարում է եբրայեցիներեն բնագրի վրայից, իսկ Նոր Կտակարանը՝ հունարենից:

Հռոմի Եկեղեցին, սակայն, կրկին ու կրկին սրբագրության է ենթարկում Հերոնիմոսի Աստվածաշունչի լատիներեն թարգմանությունը, և 1546 թվականի Տրենտյան ժողովում վերջնականապես այն ընդունվում է որպես Հռոմի Եկեղեցու պաշտոնական Աստվածաշունչ: «Ապա եվրոպական շատ լեզուներու թարգմանությունը այս Վուլկաթաի վրայեն եղան»⁹:

Մինչ Հիպպոլիտը Հռոմի Եկեղեցին օգտագործում էր հունարեն լեզուն և իր պաշտամունքների և իր մատենագիրների, ջատագովների աշխատությունների մեջ: Երբ

քրիստոնեությունը մուտք է գործում 40—50 թվականներին Հռոմ, քաղաքի բնակչության մեծամասնությունը օտարերկրացիներ էին, և Հռոմի քրիստոնեական առաջին համայնքը արևելյան նկարագիր ուներ: Այդ իսկ պատճառով Հռոմի Եկեղեցու և նրա ծիսակատարության պաշտոնական լեզուն հունարենն էր: Բ դարի վերջերին է որ հունարենը Հռոմի Եկեղեցում իր տեղը մասամբ զիջում է լատիներենին: Կատարվում են նաև Աստվածաշունչի լատիներեն թարգմանության մասնակի աշխատանքներ: Եկեղեցական արարողությունները հունարենով կատարվել են մինչև Դամասոս պապի օրերը (366—384):

Մինչև Դ դարի վերջերը Հռոմի Եկեղեցին համապատասխան մասնակցություն չի բերել քրիստոնեական գիտության, մտածողության և աստվածաբանության զարգացման բնագավառում: Հռոմի Եկեղեցին չի ունեցել նաև նշանավոր աստվածաբանական դպրոցներ, որտեղ մշակվում էին այդ գիտությունն ու աստվածաբանությունը, ինչպես ունեին քրիստոնեական արևելքի կենտրոնները, այդ թվում Ալեքսանդրիան, պաղեստինյան Կեսարիան, Անտիոքը, Ասորիքը, Կապադովկիան¹⁰:

Այս միջանկյալ շրջանում Հռոմի Եկեղեցու մի քանի ջատագովներ, լատիներեն լեզվով են գրել իրենց աշխատությունները: Բ դարից՝ 170 թվականից լատիներենով մեզ է հասել նաև Նոր Կտակարանի կանոնական գրքերի ոչ ամբողջական մի ցանկ, որը կոչվում է **Մուրատորյան** կանոն:

Մինչև այժմ դեռ վիճելի հարց է թե Մուրատորյան կանոնի բնագիրը հունարեն է եղել թե լատիներեն¹¹:

Որիգենեսը առաջին մատենագիրն էր որ իր գործերը գրել է լատիներենով:

Դ դարի վերջերից է որ Հռոմի Եկեղեցին հրաժարվում է հունարեն լեզվից և գործածում է լատիներենը, որպես պաշտոնական լեզու թե գրականության և թե եկեղեցական ծիսապաշտության մեջ: Դրանով սկիզբ է առնում լատիներեն լեզվով գրված աստվածաբանական, մեկնողական գրականությունը:

Հիպպոլիտը իր մատենագրական վաստակով, աստվածաբանական, մեկնողական, հականառական ու քարոզագրական իր աշխատանքների մեջ, իրեն համարում է ճշմարիտ աշակերտը Բ դարի եկեղեցական մեծ գործիչ և Գալլիայի առաքյալ,

⁷ Անտարան ըստ Յովհաննու, Նոր Կտակարան, Մայր Աթոռ, 1975, էջ 248:

⁸ Quasten, նույնը, էջ 163:

⁹ Գրիգոր Ա Սարափյան, Ներածություն Նոր Կտակարանի, 1950, Անթիլիաս, էջ 36—38:

¹⁰ Quasten, նույնը, էջ 153:

¹¹ Նույնը, էջ 208:

Լուգդոնի կամ Լիոնի Իրենեոս եպիսկոպոսի (125—202)¹²:

Հիպպոլիտը «Հետևողին առաքելոց» իր այս մեծ ուսուցիչ սուրբ Իրենեոսից ժառանգել է նրա նախանձախնդրության ոգին, իր ժամանակի այլազան հերետիկոսությունների դեմ պայքարելիս:

Հակա-հերետիկոսական այդ պայքարի ընթացքում, Գ դարի սկզբներին, Հիպպոլիտը որպես Եկեղեցու երեց, անցնում է Հռոմում մի կուսակցության գլուխը, որը Զեփյուսինոս (199—217) և Կալիստոս Ա (217—222) պապերի օրով, հակադրվում է նրանց եկեղեցական գործունեությանը և «պահանջում է խիստ վարվել քրիստոնեությունն ուրացողների և ծանր մեղքերի, հատկապես անառակության մեջ ընկնողների հետ, բանադրելով նոցա ո՛չ մի պայմանի ներքո կրկին Եկեղեցու գիրկը ընդունելով»¹³:

Դեկոս կայսրի (250—253) հալածանքների ժամանակ, 250 թվականին, իրենց հավատքը ուրացողներին ապաշխարությամբ Եկեղեցու գիրկը կրկին ընդունելու կամ չընդունելու հարցը, հուզում էր և՛ Արևելքում, և՛ Արևմուտքում քրիստոնեական ողջ Եկեղեցուն: Այդ հարցը Գ դարում հանդես եկող աղանդների աշխուժացման և գործունեության պատճառ էր դարձել: Եվսեբիոս Կեսարացին իր «Պատմութիւն Եկեղեցւոյ» աշխատության մեջ վկայում է որ այդ հարցի առիթով Ալեքսանդրիայի Եկեղեցու Դիոնեսիոս եպիսկոպոսը, 248-ին, նամակ է գրում Հայաստանի կամ Մեծ Հայքի հայոց Մեհրուժան Հայրապետին «վասն ապաշխարութեան», նրա կարծիքը ունենալու համար¹⁴:

Հռոմում նույն հարցի շուրջ վեճը սաստկանում է Հիպպոլիտի, նրա կողմնակիցների և Հռոմի Եկեղեցու միջև, այն աստիճան որ Հիպպոլիտը «յուր կողմնակիցների կողմից հակաթոռ եպիսկոպոս է ընտրվում» (217—234): Հիպպոլիտը իր հակաթոռությունը շարունակում է մինչև 234 թվականը, երբ նա Մաքսիմիոս Թրակացի կայսրի (235—258) հալածանքների ժամանակ 235-ին արքայություն է Հռոմի իսկական եպիսկո-

պոս Պոնտիանոսի հետ (230—235) Սարդինիա կղզին ուր մահանում է 235-ին:

Ըստ ավանդության Հիպպոլիտը Հռոմից արքայությունը առաջ հաշտվում է Հռոմի Եկեղեցու հետ: 235-ին երբ «մահվան կողմում»՝ Սարդինիայում Հիպպոլիտը և Պոնտիանոսը մահանում են, երկուսի աճյուններն էլ Ֆաբիանոս պապի օրով (236—250) բերվում են Հռոմ և մեծ հանդիսությամբ 236-ին, օգոստոսի 22-ին թաղվում: Նույն թվականին Հիպպոլիտն ու Պոնտիանոսը սուրբ են հռչակվում Հռոմի Եկեղեցու կողմից: Պոնտիանոսի աճյունը ամփոփվում է Սան Կալիստո պապական գետնադամբանում, իսկ Հիպպոլիտի աճյունը՝ Վիա Տիբուրտինա գերեզմանատանը:

Այժմ Հռոմի Լատերանի թանգարանում ապահովում է Հիպպոլիտի նշանավոր արձանը, որը կանգնեցրել են նրա մահից հետո նրա համակիրներն ու կողմնակիցները: 1551 թվականին գտնվել է այդ արձանը, որը ներկայացնում է Հիպպոլիտը եպիսկոպոսական աթոռի վրա բազմած, իսկ աթոռի ետևի կողմում արձանագրվել են Հիպպոլիտի բոլոր գրվածքների անունները, ինչպես նաև 16 տարվա համար կազմված զատկական տոմարը¹⁵:

ՀԻՊՊՈԼԻՏԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Հիպպոլիտի մատենագրական վաստակը համեմատել են Որիգենեսի հետ, և միաժամանակ նշել են որ նա չունի Որիգենեսի մտածության խորությունն ու ինքնատիպությունը: Այնուամենայնիվ, Հիպպոլիտի հետաքրքրությունների շրջանակը ավելի լայն է եղել, ընդարձակ, քան Որիգենեսինը:

Հիպպոլիտը իր մատենագրական վաստակի «բազմությամբ և ճոխությամբ կարող էր համեմատվել իր ժամանակակից Որիգենեսի հետ, սակայն, մեզ սակավ մնացորդներ են միայն հասել»¹⁶:

Հիպպոլիտը, արդյունաշատ և բազմաժանր մատենագիր է եղել, բայց նրա մատենագրական վաստակը մի շարք պատճառներով նույնպես արժանանում է տխուր ճակատագրի, ինչպես Որիգենեսինը:

Պատճառներից մեկը այն է, որ նա իր աշխատությունները Հռոմում գրել է հունարենով, որոնցից շատ քիչ բան է հասել մեզ: Մյուս պատճառը այն է որ նրա քրիստո-

¹² Երանոսի կամ Իրենեոսի կյանքի, գործունեության և մատենագրական վաստակի մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1979, № 2, էջ 23—32:

¹³ Կարապետ վարդապետ (Տեր-Մկրտչյան), Նըշխարներ ամենահին եկեղեցական հայրերի գրվածքներից, «Արարատ» ամսագիր, 1896, համար երկրորդ, էջ 58—59: Quasten, նույնը, էջ 164—165:

¹⁴ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան, Ազգապատում, Ա հատոր, մասն Ա, Բեյրութ, 1959, էջ 61:

¹⁵ Կարապետ վարդապետ (Տեր-Մկրտչյան), նույնը, էջ 59: Quasten, նույնը, էջ 165:

¹⁶ Կարապետ վարդապետ (Տեր-Մկրտչյան), նույնը, էջ 59:

սաքանական վարդապետությունը ամբողջությամբ չէ որ ընդունվել է Հռոմի Եկեղեցու կողմից: Երրորդ պատճառը այն է որ նրա հերձվածող դիրքը 217—234 թվականներին Հռոմի Եկեղեցու դեմ, նրա անվանում գործի շուրջ ստեղծել է անսիրելիություն:

Այնուամենայնիվ, մեզ հասել է Հիպպոլիտի մատենագրական վաստակից արժեքավոր ամբողջական էջեր կամ հատվածներ, մասունքներ, լատիներեն, հայերեն, ասորերեն, դպտերեն, եթովպերեն, վրացերեն, ասորերեն, հին սլավոնական թարգմանություններով¹⁷: Հիպպոլիտի մատենագրական վաստակի մեծ մասը պահպանվել է Արևելքի եկեղեցիներում:

Հիպպոլիտի մատենագրական վաստակի կարևոր աշխատությունները եղել են.

1. Հերքումն ամենայն հերետիկոսությանց, կամ Philosophumena-ն:

Ամբողջ աշխատությունը բաղկացած է 10 գրքերից, որոնցից չորսը ուժեղ ու բովանդակալից քննադատություն է հունական, հեթանոսական փիլիսոփայության դեմ: Հիպպոլիտը իր սույն աշխատությունը անվանել է հին բացատրությամբ «յանդիմանություն» հույն փիլիսոփայության: Այդ աշխատության 2 և 3 գրքերը մեզ չեն հասել: 4—10-րդ գրքերը գտնվել են սուրբ Աթոս վանքում (Հունաստան) 1829 թվականին, և նշանավոր հակաճառություն է գնոստիկյան աղանդավորների դեմ: Աշխատության բնագիրը հունարեն է և գրված 14-րդ դարում: Զեռագիրը այժմ գտնվում է Փարիզում¹⁸:

Սույն աշխատության մեջ Հիպպոլիտը հերետիկոսությունները և մանավանդ գնոսիկությունը ներկայացնում է որպես դատապարտելի վարդապետություն, ո՛չ քրիստոնեական նկարագրով, ցույց տալով միաժամանակ դրանց գաղափարախոսական կայքը հեթանոս փիլիսոփայության հետ¹⁹: Հիպպոլիտի սույն աշխատությունը որը գրվել է 222 թվականին համարվում է ամենակարևոր աղբյուրը գնոստիկյան ուսմունքի պատմության համար և հայրաբանական գրականության նշանավոր ստեղծագործությունը:

Սույն աշխատության մեջ Հիպպոլիտը լայնորեն օգտագործել է իր մեծ ուսուցիչ

սուրբ Իրենեոսի «Ընդդեմ հերձուածողաց» (Adversus Haereses) աշխատությունը²⁰:

2. Ընդդեմ ամենայն հերետիկոսությանց

Հիպպոլիտի երկրորդ կարևոր հակաճառությունն է սա, ըստ Եվսեբիոս Կեսարացու վկայության²¹: Սույն աշխատությունը եկեղեցական մատենագրության մեջ կոչվում է նաև Syntagma, այսինքն «Ընդդեմ ամենայն հերետիկոսությանց»: Աշխատությունը հերքումն է 32 տարբեր հերետիկոսությունների: Աշխատության բնագիրը կորել է: Գրվել է 199—217 թվականներին:

3. Ընդդեմ Նեոին, կամ Հակա-Քրիստոս:

Հիպպոլիտի քրիստոսաբանական կարեւոր աշխատությունն է սա, հասցեագրված իր «սիրելի բարեկամ Թեոփիլոսին»: Գրվել է 200 թվականին և մեզ է հասել ամբողջությամբ, հունարեն բնագրով²²:

Ինչպես շատերը իր ժամանակակից գրողներից, Հիպպոլիտը ևս Հռոմը համարում է «Նեոին կայսրությունը», «Հակա-Քրիստոսի կայսրության» մայրաքաղաքը, ըստ Դանիել մարգարեի «Տեսիլ չորրորդ»-ի իշխանության²³: Ըստ Հիպպոլիտի այդ «չորրորդ իշխանության», այսինքն Նաբուգոդոնոսոր արքայի անկումից հետո է որ գալու է Նեոը՝ Հակա-Քրիստոսը: Նեո-ի մասին տես Նոր Կտակարան. Ա. Հովհ. Բ. 18, 22, Դ. 3 և 7. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1975, էջ 647—648, և 650):

Հիպպոլիտի ժամանակ քրիստոնյաներից շատերը կարծում էին որ հանձին Սեպտիմոս Սևերոս կայսրի (193—211) Նեոը արդեն եկել է, մոտ է վերջին դատաւտանը, սկսվել է «հազարամյա թագավորության» շրջանը: (Տես այս մասին Նոր Կտակարան, նույնը, Յայտնություն, էջ 702, 704):

Հիպպոլիտը իր սույն աշխատության մեջ հերքում է մի շարք քրիստոնյաների ոչ ճիշտ այդ կարծիքը, բացատրում է որ Նեոի աշխարհ գալը շուտ չի կարող լինել, հակառակ քրիստոնյաների դեմ կայսրի ի գործ դրած ծանր հալածանքների:

«Ընդդեմ Նեոին» կամ «Հակա-Քրիստոս» Հիպպոլիտի աշխատությունը համարվում է Նեոի մասին ամենաընդարձակ և ծավալուն ուսումնասիրությունը, հայրաբանական գրականության մեջ:

²⁰ Տես այս մասին «Էջմիածին» ամսագիր, 1979, հունիս, էջ 28—29:

²¹ Եվսեբիոս Կեսարացի, Պատմություն Եկեղեցու, Վենետիկ, 1877, 2 դպրություն:

²² Quasten, նույնը, էջ 170:

²³ Աստուածաշունչ Մատեան Հին և Նոր Կտակարանաց, Մարգարեություն Դանիելի, Կ. Պոլիս, 1895, էջ 910:

¹⁷ Quasten, նույնը, էջ 166:

¹⁸ Նույնը, էջ 166 և Nouveau Larousse Universel, Tom premier, Paris, էջ 931:

¹⁹ Quasten, նույնը, էջ 167:

Սույն աշխատության հունարեն երեք բնագրեր մեզ հասել են: Կան նաև նույն գործի հայերեն, վրացերեն և հին սլավոնական լեզուների թարգմանության հատվածներ²⁴:

4. Մեկնողական աշխատություններ:

Հիպպոլիտը ունի Հին և Նոր Կտակարանների մի շարք գրքերի վրա գրած հոգելից մեկնություններ: Որպես Որիգենեսի բարեկամն ու հիացողը, նա մեկնողական իր աշխատությունները գրել է Ալեքսանդրիայի աստվածաբանական դպրոցի ավանդությունների համաձայն, հետևելով մանավանդ Որիգենեսի այլաբանական մեթոդին, թեև, ըստ մասնագետների վկայության, մեծ տարբերություններ կան Որիգենեսի միատիկ, փիլիսոփայական և Հիպպոլիտի քարոզակերպ մեկնությունների բովանդակության և ոճի մեջ:

Հիպպոլիտի բազմաժանր, հարուստ աշխատությունների մեջ կարևոր տեղ են գրավում նաև Դանիելի մարգարեության գրքի վրա 204 թվականին նրա գրած չորս գրքերը²⁵: Սույն մեկնությունը մեզ հասել է հին սլավոնական թարգմանությամբ, իսկ հունարեն բնագրից հասել են նաև հատակտոր թարգմանություններ հայերեն և ասորերեն լեզուներով: Հիպպոլիտի սույն մեկնությունը, որը գրվել է 204 թվականին համարվում է հնագույնը Հին Կտակարանի մեկնությունների մեջ²⁶:

Հիպպոլիտը իր մեկնողական աշխատությունների մեջ համարվում է Հռոմի Եկեղեցու «ամենաշնորհալի և տաղանդավոր աստվածաբանը»²⁷:

Հիպպոլիտի մեկնողական երկրորդ կարևոր գործը Հին Կտակարանի Երգ Երգոց կամ «Օրհնութիւն օրհնութեանց» գրքի մեկնությունն է: Հունարենից ամբողջական բնագրի թարգմանությունը պահվել է միայն վրացերեն: Սակայն, կան նաև նույն մեկնության հունարեն բնագրից ինչպես նաև հայերեն, ասորերեն և սլավոներեն թարգմանություններից հատակտորներ²⁸:

Երգ-Երգոց-ի մեկնության ընդհանուր նկարագիրը հոետորական է²⁹: Հիպպոլիտը իր սույն մեկնությունը ընթերցել է Հռոմում, հավատացյալների մի ժողովում: Մեկնությունը կատարվել է այլաբանական մեթո-

դով և հիշեցնում է Որիգենեսի Երգ-Երգոցի մեկնությունը: Մեկնության մեջ Երգ-Երգոցի փեսան Քրիստոսն է, իսկ հարսը՝ եկեղեցին³⁰:

Հիպպոլիտը մեկնություններ է գրել նաև Ծննդոց գրքի 49-րդ գլխի Հակոբ մահապետի իր 12 որդիներից տված օրհնության վրա, որդիներ՝ որոնք ապա կազմեցին Իսրայելի 12 ցեղերը, «Որդիք Յակոբայ՝ ազգք երկոտասան»³¹: Սույն մեկնության հունարեն բնագիրը, ինչպես նաև հայերեն ու վրացերեն թարգմանությունները հասել են մեզ³²:

Հիպպոլիտի Հնգամատյանի «Երկրորդումն օրհնաց» գրքի 33-րդ գլխի վրա գրած մեկնությունը³³ մեզ հասել է դարձյալ հայերեն և վրացերեն թարգմանությամբ: Կան նաև նույն աշխատության հունարեն բնագրի երկու փոքր հատակտորներ³⁴:

Հիպպոլիտի մեկնողական աշխատությունների կարևոր գրքերից մեկն է նաև նրա Սաղմոսաց մեկնությունը: 1551 թվականի Հիպպոլիտի Հռոմի դամբարանում գտնված նրա արձանի ետևի մասում գրված աշխատությունների մեջ հիշվում է Սաղմոսի մեկնությունը: Հիպպոլիտը, սակայն, Սաղմոսների ամբողջ գրքի վրա³⁵ չէ որ մեկնություն է գրել, այլ՝ ընտրված որոշ գլուխների վրա:

5. Պատմական աշխատություններ, ճաներ, քարոզներ

234 թվականին, Հիպպոլիտը գրել է տիեզերական պատմության մի ժամանակագրություն (Քրոնիկոն), սկսած աշխարհի ստեղծագործությունից մինչև իր ժամանակը: Սույն աշխատության գրության առիթ է ծառայել մի շարք քրիստոնյաների այն միամիտ հավատքը, որ Սեպտիմոս Սևերոս կայսրի հալածանքների պատճառով շուտով լինելու է Քրիստոսի երկրորդ գալուստը և տեղի է ունենալու աշխարհի վերջին դատաստանը: Հիպպոլիտի Քրոնիկոնը գրվել է Քրիստոսի երկրորդ գալստյան շուտափույթ լինելու այդ սխալ մտայնությունը հերքելու համար: Սույն աշխատության հայերեն թարգմանության հատակտորներ մեր ձեռագրերում կոչվում են «վասն կատարածի աշխարհի»:

³⁰ Աստուածաշունչ Մատեան..., նույնը, էջ 697—701:

³¹ Նույնը, Գիրք Ծննդոց, էջ 51—52:

³² Quasten, նույնը, էջ 174:

³³ Աստուածաշունչ Մատեան..., Գիրք Երկրորդումն Օրհնաց, նույնը, էջ 224—226:

³⁴ Quasten, նույնը, էջ 174:

³⁵ Աստուածաշունչ Մատեան..., նույնը, էջ 587—654:

²⁴ Quasten, նույնը, էջ 171:

²⁵ Աստուածաշունչ Մատեան..., Կ. Պոլիս, 1895, էջ 905—927:

²⁶ Quasten, նույնը, էջ 171:

²⁷ Encyclopedia americana, vol. 14, էջ 202:

²⁸ Quasten, նույնը, էջ 173:

²⁹ Նույնը:

Հիպպոլիտը գրել է մասնաբաժնի մասեր, քարոզներ, Հոռոմի քրիստոնյաների հոգևոր շինության և դաստիարակության մասին: Նրա մեկնողական աշխատությունները կրում են հիմնականում մատչելի, քարոզչական բնույթ և «համարյա անկարելի է որոշիչ բաժանման գիծ դնել դրանց մեջ»³⁶:

Հիպպոլիտի մատենագրական վաստակի մեջ կարևոր տեղ է գրավում մասնա 215 թվականին նրա **Առաքելական Աւանդությունը**, որի հունարեն սկզբնական բնագիրը կորել է, մնացել են միայն մի քանի փոքր հատակտորներ, և դատարեն, եթովպերեն, արաբերեն ու լատիներեն թարգմանություններ:

Հիպպոլիտի սույն աշխատությունը համարվում է «հին, քրիստոնեական եկեղեցու հնագույն ու ամենակարևոր կանոնադրությունը», կամ «Կարգաց գիր Հոռոմի եկեղեցու», որը ներկայացնում է Հոռոմի Եկեղեցու ծիսապաշտության կանոնները, եկեղեցական նվիրապետության տարբեր կարգերի՝ եպիսկոպոսի, երեցի, սարկավագի, ձեռնադրության և նրանց պարտականությունների, Ս. Հաղորդության, մկրտության և դրան անմիջապես հաջորդող դրոշմի խորհուրդների կատարման կանոնը, ինչպես նաև մինչև Գ դարի սկիզբը Հոռոմի Եկեղեցու ծիսապաշտական ու նվիրապետական կարգի, եկեղեցական սահմանադրության «ամենահարուստ աղբյուրը» ըստ առաքյալների ավանդության ու հրահանգի³⁷:

Սույն եկեղեցական «Աւանդությունը» կամ սահմանադրությունը բաղկանում է երեք գլխավոր մասերից:

Հիպպոլիտի անվան հետ է կապված մասնա Նոր Կտակարանի «ներշնչված» կամ կանոնական գրքերի հնագույն կանոնի կազմության հարցը:

Սույն աշխատությունը համարվում է Նոր Կտակարանի գրքերի հնագույն կանոնը և շատ կարևոր նշանակություն ունի «Նոր Կտակարանի գրքերի կանոնի պատմության համար»³⁸: 1740 թվականին իտալացի Լ. Ա. Մյուրատորին վերոհիշյալ կանոնի Ը դարի բնագրի լատիներեն թարգմանությունը գրտավ Միլանոյի Ամբրոսյան գրադարանում և այն հրատարակեց:

Հիպպոլիտի կազմած Նոր Կտակարանի գրքերի կանոնը պարունակում է այժմյան Նոր Կտակարանի կանոնական 27 գրքերի 22-ը միայն: Պակասում են «եբրայեցոց թուղթը», Հակոբոսի, Պետրոսի առաջին, և

Հովհաննես առաքյալների առաջին և երկրորդ «Ընդհանրական թղթերը»³⁹:

Ըստ մասնագետների, սակայն, Բ դարի վերջին քառորդում Հոռոմում կազմված նոր Կտակարանի գրքերի Հիպպոլիտյան կանոնը չի համարվում Հոռոմի Եկեղեցու կողմից ընդունված պաշտոնական փաստաթուղթ⁴⁰:

Հիպպոլիտի բազմաժանր և հարուստ մատենագրական վաստակի այլ աշխատությունների, ինչպես նաև նրա աստվածաբանության, քրիստոսաբանության, եկեղեցաբանության, փրկչաբանության և կորած բազում գործերի մասին կարդալ Quasten, նույնը, 175—207 էջերը:

ՀԻՊՊՈԼԻՏԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ՎԱՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հիպպոլիտը իր մատենագրական վաստակով համարվում է «ամենաբեղմնավոր մի հեղինակ Գ դարում»⁴¹:

Արդարև նա թողել է հարուստ և բազմաժանր մատենագրական վաստակ: «Այս գրքվածքների բազմությամբ և ճոխությամբ Հիպպոլիտը իր ժամանակակից Որիգենեսի հետ կարող էր համեմատվել»⁴², ինչպես նշվեց վերևում:

Հիպպոլիտը, այնուամենայնիվ, ըստ մասնագետների վկայության, իր հարուստ մատենագրական վաստակում «չի փորձել երբեք կազմել աստվածաբանական մի կոտ սիստեմ, ինչպես արել է Որիգենեսը: Նա հետաքրքրվել է ավելի եկեղեցական գործնական հարցերով, քան զուտ գիտական ուսումնասիրություններով և աստվածաբանական-փիլիսոփայական հայեցողությամբ: Ամեն պարագայում, սակայն, նա փայլուն գրող է: Մինչև հույն քրիստոնյա ջատագովները, այդ թվում նաև Որիգենեսը, փորձում էին մի կամորջ ստեղծել հելլենիստական մշակույթի և քրիստոնեական հավատքի միջև, Հիպպոլիտը հույն հեթանոս փիլիսոփայության վրա նայում էր որպես աղբյուրը բոլոր հերետիկոսությունների»⁴³:

³⁹ Նույնը, էջ 207—208: Սարաֆյան Գրիգոր, նույնը, էջ 83:

⁴⁰ Quasten, նույնը, էջ 208:

⁴¹ Կնիք հաւատոյ, նույնը, էջ XXXVI:

⁴² Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյան, Նըշխարներ ամենահին եկեղեցական հայրերի գրվածքներից, «Արարատ» ամսագիր, 1896, երկրորդ համար, էջ 59:

⁴³ Quasten, նույնը, էջ 198:

³⁶ Quasten, նույնը, էջ 178—180:

³⁷ Նույնը, էջ 180:

³⁸ Նույնը, էջ 207:

Հիպպոլիտի մատենագրական վաստակի ամբողջական կամ միայն հատվածների թարգմանություններ հասել են մահ հայերեն թարգմանությամբ⁴⁴:

«Հայկական թարգմանության մեզի ավանդածք՝ քանի մը հատվածք ևեթ են, ընտիր ոճով և լեզվով, հինգերորդեն ութերորդ դարու մեջ եղած փոխադրությունք»⁴⁵:

Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում կան հետևյալ թարգմանությունները Հիպպոլիտի մատենագրական վաստակից.

Ա. հատոր

866. ԺԴ դար, Փոսոյ վանք, գրիչ՝ Ստեփանոս. ճառընտիր, ճառք, Հիպոլիտ Բոստրացի, էջ 428:

944. 1431 թ., Էրեզ վանք. գրիչ Յովհաննէս, Ղազար աբեղա, ժողովածու, ճառք, քարոզք Հիպոլիտ, էջ 444:

996. 1442 թ. Սերկևիլի գյուղ, գրիչ՝ Ռհաննէս միայնակեաց, ճառընտիր, ճառք. Ի Յովհաննոս մեկնութենէն Հիպպոլիտեայ Բոստրացոյ, էջ 456:

1138. 1347 թ. Սիս, գրիչ Դաւիթ, Մկրտիչ դպիր. ժողովածու, Հիպոլիտեայ Բոստրացոյ մեկնութիւն Երզոց Երզոյն, էջ 485:

1838. 1724 թ. Ագուլիս, գրիչ Միքայէլ Գողթնացի, ժողովածու, Հիպոլիտայ վասն կատարածի աշխարհի, էջ 653:

2330. 1633, 1641—1643 թ. Կաֆա, գրիչ Ստեփանոս Մշկոցի, Վրդանէս դպիր, ժողովածու, Հիպոլիտոսի եպիսկոպոսի վասն կատարածի աշխարհի, էջ 776:

2607. 1300 թ. գրիչ՝ Թորոս քհյ, Բանք հաւատոյ, Հիպոլիտ, էջ 836:

2715. ԺԹ դ. գրիչ՝ Յակոբ, Յովակիմ, ժողովածու, ճառք, քարոզք, խրատք, Հիպոլիտ, էջ 861:

3215. ԺԷ դ. ժողովածու, Հիպոլիտ Բոստրացի. մեկնութիւն Երզոց երզոյն, էջ 966:

3787. ԺԴ դ. գրիչ՝ Գրիգոր քհյ, Սոսթենէս, Աւագ, ճառընտիր, ճառք, Հիպոլիտ Բոստրացի, էջ 1084:

4066. 1283 թ. Անաւարզա, գրիչ՝ Կոստանդին, Ստեփանոս, ժողովածու, Հիպոլիտեայ Բոստրացոյ մեկնութիւն Երզոց երզոյն (լրացված՝ Ներսէս Լամբրոնացոյ մեկնության հատվածներով), էջ 1141:

4095. ԺԸ դ. ժողովածու, ճառք, քարոզք Հիպոլիտ, էջ 1147:

4207. 1284 թ. Ատանայ, գրիչ՝ Կոստանդին, ժողովածու, Բան հաւատոյ Հիպոլիտ Բոստրացի, էջ 1170:

4505. ԺԵ դ. ճառընտիր, ճառք, քարոզք, Հիպոլիտ Բոստրացի, էջ 1226:

4717. 1592. Գինեկաց գիւղ, գրիչ՝ Աբրահամ երէց, ճառընտիր, ճառք, խրատք. Հիպոլիտայ Բոստրացոյ վասն կատարածի աշխարհի, էջ 1270:

4724. 1611 թ. Վան, գրիչ՝ Սահակ քհյ, Մարտիրոս, Մելքիսէթ, ճառընտիր, ճառք, խրատք, Հիպոլիտայ Բոստրացոյ վասն կատարածի աշխարհի, էջ 1212:

4726. ԺԷ դ. գրիչ՝ Տէր Դաւիթ Արտամեղի, Աւետիս, Տէր Միսիթար, ճառընտիր, ճառք, խրատք, Հիպպոլիտայ Բոստրացոյ վասն կատարածի աշխարհի, էջ 1273:

4749. 1575 թ. Ապարանից վանք, Վարագ, գրիչ՝ Կիրակոս աբեղայ, ճառընտիր, Հիպոլիտայ Բոստրացոյ վասն կատարածի աշխարհի, էջ 1278:

4756. ԺԶ դ. գրիչ՝ Մկրտիչ. ճառընտիր, ճառք, խրատք, Հիպոլիտայ Բոստրացոյ վասն կատարածի աշխարհի, էջ 1280:

Բ. հատոր

5244. ԺԸ դար. ճառընտիր, ճառք, Ի Յովհաննոս մեկնութենէ Հիպոլիտեայ Բոստրացոյ, էջ 66:

6706. Ժողովածու, գրիչ՝ Պաղտասար, ԺԹ դար. ճառք, Ի Յովհաննոս մեկնութենէն Հիպոլիտեայ Բոստրացոյ, էջ 376:

7441. 1332 թ. ճառընտիր, գրիչ՝ Վարդան, Աբրահամ քահանայ, ճառք, ներբողեանք, «Յերզոց երզոյն» մեկնութենէն Հիպոլիտեայ Բոստրացոյ, էջ 533:

7489. 1725—1729 թթ. ճառընտիր, Երուսաղէմ, Կ. Պոլիս, գրիչ՝ Մարտիրոս երէց, ճառընտիր, ճառք, ներբողեանք, Հիպոլիտոս Բոստրացի, էջ 544:

7729. 1200—1202 թթ. ճառընտիր, Աւագ վանք (Երզնկա), գրիչ Վարդան քահանայ Կարնեցի—ճառընտիր, ճառք, ներբողեանք, Հիպոլիտ Բոստրացի, էջ 598:

7951. 1614. Տփղիս, ժողովածու, գրիչ՝ Հովհաննէս աբեղա, Քարոզք, Հեպոլիտ եպս., էջ 642:

8467. 1627—1629 թթ. ժողովածու, Լվով, գրիչ՝ Եսայի Սեբաստացի, Ղուկաս, անանուն. Բառք խորանին. Բան հաւատոյ՝ Հիպոլիտ Բոստրացի, էջ 751:

9568. 1749 թ. Հիպոլիտայ Բոստրացոյ, վասն կատարածի աշխարհի, էջ 952:

9613. 1814 թ. Աստրախան, ժողովածու,

⁴⁴ Տես այս մասին նույնը, էջ 171, 173, 174—175, 177, 180: Կարապետ վարդապետ, «Արարատ», նույնը, էջ 59:

⁴⁵ Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 554:

գրիչ՝ Ստեփանոս Սերեբրակյանց, ճառք, խրատք, Հիպոդիտո Բոստրացի, էջ 960:

10236. 1700—1701, Վան, ժողովածու, գրիչ՝ Հովսեփ Մածնակեր, խրատք, ճառք, ներբողեանք, Հիպոդիտոյ Բոստրացոյ վասն կատարածի աշխարհի, էջ 1076:

«Մատենադարան հայկական թարգմանութեանց»-ը հիշատակում է «երանելոյն Հիպոդիտոյ եպիսկոպոսի Բոստրացոյ» հետևյալ ճառերի և քարոզների թարգմանությունները (էջ 555—557)։

«Յ'երգս երգոց մեկնութենէն». «Ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իր... ո՛վ երջանիկ ձայն սքանչելի կանանցն»...

«Ի մեկնութենէ Աւետարանին որ ըստ Յովհաննոս». Ի յարութիւնն Ղազարու. «զոր օրինակ մայր որդեսէր տայ զստիմարն մանկան... բայց էր Մարիամս այս որ օծ զտէր իւղով և մաքրեաց հերով իւղով զոտս նորա»:

Հատուած ի ճառէն որ ի Յարութիւնն Ղազարու. «Հրամայեաց նորին իսկ հրէիցն ձեռօք իրեանց թաալեցուցանել զվէմն, զի ինքեանք վկայք եղիցին յինէն եղելոց նշանացն»:

Յօրհնութիւնսն Յակովբայ որ զերկոտասան նահապետսն օրհնեաց.

Մեկնութիւն օրհնութեանցն Մովսիսի յերկոտասան ազգս.

Մեկնութիւն Դանիէլի, յորմէ հատուածք եւեթ ի ճառընտիրս.

Վասն գալստեանն Նեոին. «Եւ ահա գազանն չորրորդ». «Քանզի երանելի մարգարէքն», «Քանզի տեառն Յիսուսի գալուտըն», «Եւ արդ լուարուք, եղբարք».

Բանք վասն տօնի ծննդեան և մկրտութեան.

Մայր Աթոռի գիտնական Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյան, «Արարատ» ամսագրի 1896 թվի երկրորդ համարում հրատարակել է Հիպոդիտոի գործերի հայերեն թարգմանությունից չորս հատվածներ քաղելով դրանք Մայր Աթոռի համար 95 ձեռագրից (էջ 20):

Բան է. Հիպոդիտեա Բոստրացո. «Զի միութիւն սրբոյ Երրորդութեանն՝ այն ի զօրութեանցն յայտ է.

Այլուստ է. «Ըստ նմին օրինակի, թէպէտ և յԱստուծոյ են Որդի և Հոգի, ոչ ասին եղբարք միմեանց, զի յայտնի են միմեանց պայմանք իրաքանչիւր գոյութեանցն ի միոջէ եութենէ Հօր»:

Նորին. «Ոչ վասն անձին ինչ միայնոյ զաստուածութիւնն ասէր՝ թէ ես եմ Աստուած և այլ որ չիք»:

Նորին ի նույն. «Զի Հայր Աստուած կա-

տարեալ է և Որդի Աստուած բանական և Հոգին Սուրբ Աստուած բանական է»:

«Արարատ» ամսագրի նույն համարում և Մայր Աթոռի նույն ձեռագրից Կարապետ վարդապետը հրատարակել է նաև Ս. Գրիգոր Սքանչելագործի «հոշակաւոր հանգանակը», էջ 60—61⁴⁶, որը «դավանանքների պատմության մեջ յուր տեղը ունենալով՝ կարող է գուցե նաև մեր հանգանակի ուսումնասիրության համար իբրև օժանդակ միջոց ծառայել»⁴⁷:

Կարապետ վարդապետը, «Արարատ» ամսագրի 1895 մայիսի համարում, հատոր 5, էջ 146—150 հրատարակել է նաև արժեքավոր «մի հատված Որիգենեսի գրվածքներից և Պատճառ լայն ու նուրբ գրոց ձեռագիրը», այն քաղելով Էջմիածնի Մայր ցուցակի 1608 ձեռագրից: Որիգենեսյան հատվածի ընդհանուր վերնագիրն է «Պատճառ լայն և նուրբ գրեանց, առեալ ի հարց սրբոց և ի վարդապետաց և ի մի հաւաքեալ և հոգացեալ մեծ ռաբունապետին Գրիգորի որդոյ Աբասայ»:

Արարատ-ի 1895 համարում էջ 149—150 հրատարակվել է նաև Որիգենեսի մատենագրական վաստակի մի երկրորդ մասունքը, որը կոչվում է «Որիգենի ասացեալ ի տեսութիւն Եզեկիէլի մարգարէի. «Արդ, պատճառք առաջին գալստեանն յօրինակ արծուի՝ զչարիսն ասէ զոր հանդերձեալ էր գալ ի վերայ մնացեալ հրէիցն»:

Որիգենեսի կյանքի, գործունեության և մատենագրական վաստակի մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1981, № 2, էջ 26—34, № 3, էջ 17—21:

Արարատ ամսագրի 1896 համարի 49-րդ էջում Կարապետ վարդապետը (Տեր-Մկրտչյան) տպագրել է «Վկայութիւնք վասն Ծննդեան Բրիստոսի և Մկրտութեան տօնել ի միում աւուր, ի յունուարի վեցն» եկեղեցու հին հայրերի վկայությունը, այդ թվում նաև «Հիպոդիտայ եպիսկոպոսի» վկայությունը, նույն հարցի մասին, «Իննամսեայ տէրն ծնաւ և երեսնամեայ մկրտեցաւ»:

«Կնիք հաւատոյ» ժողովածուում⁴⁸ կա Հիպոդիտոի մատենագրական վաստակից հայերեն թարգմանված մի ընդարձակ հատված, որը վերցվել է Էջմիածնի Մայր ցուցակի 95=2678 ձեռագրից: Այդ հատվածի

⁴⁶ Ս. Գրիգոր Սքանչելագործի կյանքի, գործունեության և մատենագրական վաստակի մասին տես «Էջմիածին» ամսագիր, 1881, № 1, էջ 28—36:

⁴⁷ Նույն տեղ, էջ 60:

⁴⁸ Կնիք հաւատոյ, նույնը, էջ 7—15:

վերնագիրն է «Հիպոդիտեայ եպիսկոպոսի Բոստրացոյ՝ ի Սուրբ Երրորդութիւնն, հարցումն և պատասխանիք»:

Այս մասին «Կնիք հաւատոյ» ժողովածոյի հրատարակիչ, Մայր Աթոռի գիտնական միաբան, իր «Ներածութիւն» ուսումնասիրության մեջ էջ XXXVI, նշում է որ սույն «հատվածի ամբողջությունից պարզվում է այժմ... որ այն Հիպոդիտի գործ լինել չի կարող, քանի որ մեջը հիշված են Դ դարում հանդես եկող արիսականները»⁴⁹:

Իր նույն «Ներածութեան» մեջ, Կարապետ եպիսկոպոսը նշում է որ «ըստ նոր

ցուցակի № 4066 ձեռագրում գտնվում է Հիպոդիտի «Համառօտ մեկնութիւն Երգոյ երգոցս» (1283-ին արձանագրված Ներսէս Լամբրոնացու օրինակից), պատրաստվում է հրատարակության Մայր Աթոռի մի այլ գիտնական միաբան Տ. Գարեգին վարդապետ Հովսեփյանցի կողմից: Իսկ Կարապետ եպիսկոպոսը, հրատարակության է պատրաստում Գ: 482=3795 ձեռագրից արտագրած «Մեկնութիւն Թագաւորութեանն, որ վասն Դաւթի և Սաւուղա և Կործանելոյն Գողիարի՝ Յովհաննու Ոսկեբերանի, Եփրեւի և Հիպոդիտեայ ասացեալ» մի բոլորովին անձանոթ հատված»⁵⁰:

⁴⁹ Նույնը, էջ XXXVI:

⁵⁰ Նույնը, էջ XXXVI—XXXVII:

